


**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



Մարզկենտրոնը՝ ք. Իջևան

<i>Մարզի տարածաշրջանները՝</i>	<i>Քաղաքները՝</i>
Իջևան	Իջևան
Տավուշ	Նոյեմբերյան
Նոյեմբերյան	Այրում
Դիլիջան	Դիլիջան
	Բերդ

ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում:

Մարզը սահմանակից է.

- **հարավ-արևելքում և հարավում՝** ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին,
- **արևմուտքում՝** ՀՀ Լոռու մարզին և **պետական սահմանով՝** Վրաստանին,
- **հարավից՝** ՀՀ Վայոց ձորի մարզին,
- **հյուսիսում և արևելքում՝** Ադրբեջանին

ՀՀ պետական սահմանից մարզին բաժին է ընկնում 400 կմ հատված, որից 352-ը՝ Ադրբեջանի հետ:

Տարածքը	2704 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.1 %
Քաղաքային համայնքներ	5
Գյուղական համայնքներ	57
Քաղաքներ	5
Գյուղեր	60
Բնակչության թվաքանակը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ	134.1 հազ.մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	52.5 հազ.մարդ
գյուղական	81.6 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2008թ.	4.1%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	39.1%
Գյուղատնտեսական նշանակության հողեր	112115 հա
այդ թվում՝ վարելահողեր	25415 հա

Վարչատարածքային բաժանումը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ

	Տարածքը, քառ. կմ	Մայրաքաղաքը/մարզ-կենտրոնը	Բնակչության խտությունը, մարդ/կմ ²	Համայնքներ				Գյուղական բնակավայրեր
				ընդամենը	քաղաքային	քաղաքային	գյուղական	
Հայաստանի Հանրապետություն	29743	Երևան	109	926	48	12	866	949
ՀՀ Տավուշի մարզ	2704	Իջևան	50	62	5	-	57	60

ՀՀ Տավուշի մարզի քաղաքները

(հունվարի 1-ի դրությամբ)

Քաղաքի անվանումը	Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը	Հեռավորությունը մինչև Երևան, կմ	Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ				
			2005	2006	2007	2008	2009
Այրում	2006	205	2.4	2.4	2.4
Բերդ	1995	186	8.7	8.7	8.6	8.6	8.5
Գիլիջան	1951	96	16.0	15.8	15.7	15.6	15.6
Իջևան	1961	132	20.4	20.4	20.4	20.5	20.5
Նոյեմբերյան	1995	185	5.5	5.5	5.5	5.5	5.5

Մարզի կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսում է **Աղստև** գետը: Ծովի մակարդակին ամենամոտ կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Գեբեղավան գյուղի մոտ՝ 390մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2993 մ:

ՀՀ **Տավուշի մարզը** տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ):

Գտնվում է Հայաստանի Հանրապետության չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է:

Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ:

Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից:

Բնական լիճը՝ Դիլիջանի մոտ գտնվող **Պարզ** լիճն է:

1970-1980թթ. կառուցվել են Ջողազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Իջևանի արհեստական ջրամբարները:

Մարզի բնությունը գեղատեսիլ է: Ընդհանուր մակերեսի 40.3%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ, պատմական ժառանգության անզուգական հուշարձաններով:

Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին (դենդրոպարկը):

Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

Արարատյան թագավորության (Ուրարտու) ստեղծումից (մ.թ.ա. IX դար) հետո Ետունի (Ուտիք) նահանգի կազմում է գտնվել Տավուշի մարզի ողջ տարածքը: Մարզի կենտրոնական և արևմտյան հատվածները գտնվել են Տիգրան Մեծի ստեղծած Մեծ Հայքի եզրային 4 գորավարություններից (բղեշխություններից) մեկի՝ Գուգարքի մեջ: Դիլիջանն իր շրջակայքով, որպես հայ թագավորների որսարան և ամառային հանգստավայր, մտել է Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառի մեջ: Իսկ մարզի արևելյան հատվածը եղել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Տուսքուստակ (միջնադարում՝ Տավուշ անվանմամբ) գավառը:

Մարզի տարածքը մշտապես ենթարկվել է հյուսիսից և արևելքից արշավող ռազմաշունչ ցեղերի հարձակումներին: XVII դարի վերջին ռուսաց ցարը Ղազախի երկրամասը շնորհում է Ղարաբաղի մեկիքներին և, արդյունքում, վերակենդանանում են հայաթափված Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները: XVIII դարի սկզբին Ղազախ-Շամշադին տեղամասը ներառվում է Լոռու գավառի մեջ, իսկ 1868թ. Ղազախի գավառ անունով միացվում է Ելիզավետապոլի նահանգին:

ՀՀ Տավուշի մարզի տարածքը չափազանց հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ վանքային համալիրներ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ, դամբարաններ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ: Հատկանշական են Գոշավանքը, Հաղարծնի ու Մակարավանքի համալիրները, Տավուշ բերդը և այլն: Տավուշի մարզում է գտնվում ՀՀ ամենախոշոր աղյուսակերտ եկեղեցին՝ Կիրանցի վանքը: 1998թ. մարզկենտրոն Իջևանում օծվեց ս.Ն. Շնորհալի եկեղեցին:

Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը :

Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը:

Հյուսիսային սահմանի երկայնքով, Գեբեղի ավով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

Տնտեսությունը

Մարզը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Ծրագրեր են իրականացվում պտղատու այգիների վերականգնման ուղղությամբ: Վերջին տարիներին զարգացում է սպրում նաև մեղվաբուծությունը:

Մինչև 1990թ. մարզը տալիս էր հանրապետության ծխախոտի հումքի 33.0%-ը և պտղի՝ 23.0%-ը: Նախկին Շամշադինի և Իջևանի վարչական շրջանները հանրապետությունում գրավում էին առաջին երկու տեղերը՝ ծխախոտի հումքի (տարեկան համապատասխանաբար 2500-2700 տոննա և 1800-2000 տոննա), Նոյեմբերյանի շրջանն առաջին տեղը՝ պտուղների (տարեկան 25-30 հազ. տոննա) արտադրությամբ:

2008թ.-ին ՀՀ Տավուշի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.7%,
- գյուղատնտեսություն՝ 5.5%,
- շինարարություն՝ 0.5%,
- մանրածախ առևտուր՝ 1.2%,
- ծառայություններ՝ 0.4%:

Մարզի արդյունաբերության առաջատար ճյուղը **մշակող** արդյունաբերությունն է: Առավել գերակշռող են սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը:

Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում գինիներ, հանքային ջուր, քարե և փայտե արտադրատեսակներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Իջևան քաղաքը

Մարզկենտրոն Իջևան (մինչև 1919թ.-ը՝ Քարվանսարա) քաղաքը (2008թ. տարեվերջին՝ 20.5 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ հեռավորության վրա:

Մարզի հյուսիս-արևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝ փայտամշակումը, սննդամթերքի, հանքային ջրի և գինու արտադրությունը):

Իջևան քաղաքը հայտնի է նաև գորգագործությամբ:

Դիլիջան քաղաքը

Դիլիջան քաղաքի (2008թ. տարեվերջին՝ 15.6 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 96 կմ է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Լայն ճանաչում է ստացել «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրը:

Նոյեմբերյան քաղաքը

Նոյեմբերյան (մինչև 1938թ.՝ Բարանա) քաղաքի (2008թ. տարեվերջին՝ 5.5 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 185 կմ է:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունն անասնաբուծությունն ու դաշտավարությունն է:

Այրում քաղաքը

Այրում քաղաքի (2008թ. տարեվերջին՝ 2.4 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 205 կմ է: Այն կայարանամերձ քաղաք է, բնակչության հիմնական զբաղվածությունը մանրածախ առևտուրն է: Աշխատանքներ են տարվում Այրումի պահածոների գործաժրանի վերագործարկման ուղղությամբ:

Բերդ քաղաքը

Բերդ քաղաքի (2008թ. տարեվերջին՝ 8.5 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 186 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում գերակշռողը բազմաճյուղ գյուղատնտեսությունն է, որի մեջ առանձնանում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունն ու դաշտավարությունը:

ՀՀ Տավուշի մարզի քաղաքային համայնքները

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը, մարդ	
			01.01.2008թ. դրությամբ	01.01.2009թ. դրությամբ
1	Իջևան	ք.Իջևան	20509	20491
2	Բերդ	ք.Բերդ	8561	8528
3	Դիլիջան	ք.Դիլիջան	15656	15601
4	Նոյեմբերյան	ք.Նոյեմբերյան	5529	5494
5	Այրում	ք.Այրում	2381	2371

ՀՀ Տավուշի մարզի գյուղական համայնքները

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը, մարդ	
			01.01.2008թ. դրությամբ	01.01.2009թ. դրությամբ
1.	Ազատամուտ		2644	2664
2.	Ակնաղբյուր		435	436
3.	Աղավնավանք		282	293
4.	Աճարկուտ		182	187
5.	Այգեհովիտ	•Այգեհովիտ •Կայան	3428	3439
6.	Այգեձոր		2608	2591
7.	Այգեպար		605	612
8.	Աչաջուր		4447	4476
9.	Արծվաբերդ		3267	3271
10.	Արճիս		1109	1068
11.	Բագրատաշեն		2833	2811
12.	Բաղանիս		766	752
13.	Բարեկամավան		500	468
14.	Բերդավան		3278	3275
15.	Բերքաբեր		527	526
16.	Գանձաքար		3475	3504
17.	Գետահովիտ		2043	2069
18.	Գոշ		1155	1148
19.	Դեբեդավան		658	658
20.	Դեղձավան		244	243
21.	Դիտավան		327	322
22.	Դովեղ		570	569
23.	Ենոքավան		494	489
24.	Ջորական		1044	1044
25.	Թեղուտ		1421	1426
26.	Իծաքար		306	310
27.	Լճկաձոր		402	438
28.	Լուսահովիտ		390	387
29.	Լուսաձոր		697	704
30.	Խաչթառակ		1782	1804
31.	Խաչարձան	•Խաչարձան •Գեղատափ •Ճերմակավան	405	392
32.	Ծաղկավան (Իջևանի տարածաշրջան)		557	554
33.	Ծաղկավան (Տավուշի տարածաշրջան)		958	963
34.	Կիրանց		298	289
35.	Կոթի		2270	2258
36.	Կողբ		4328	4341

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը, մարդ	
			01.01.2008թ. դրությամբ	01.01.2009թ. դրությամբ
37.	Հաղարծին		4022	3996
38.	Հաղթանակ		1180	1165
39.	Հովք		409	385
40.	Մոսեսգեղ		2046	2021
41.	Նավուր		1157	1176
42.	Ներքին Կարմիր աղբյուր		1105	1092
43.	Նորաշեն		1746	1736
44.	Ոսկեայր		880	875
45.	Ոսկեվան		1405	1425
46.	Չինարի		1279	1271
47.	Չինչին		687	677
48.	Չորաքան		1060	1052
49.	Պառավաքար		1735	1750
50.	Պտղավան		874	875
51.	Ջուջևան		612	626
52.	Սարիգյուղ		1253	1262
53.	Սևքար		2037	2053
54.	Վազաշեն		830	864
55.	Վարագավան		719	707
56.	Վերին Կարմիր աղբյուր		1837	1727
57.	Տավուշ		1568	1576

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԹԱՂԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2008թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10000	5082	4918
Ծնվածներ, մարդ	114	56	58
Մահացածներ, մարդ	103	49	54
Ամուսնություններ	50	X	X
Ամուսնալուծություններ	7	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	32.0	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	165	82	83
հանրակրթական	1318	643	675
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	125	86	39
նախնական մասնագիտական (արհեստագործական)	9	2	7
միջին մասնագիտական	100	52	48
բարձրագույն մասնագիտական	126	66	60
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	22985
Մարզիկներ, մարդ	58	13	45
Զբաղվածներ, մարդ	3764
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	158	129	29
բժիշկներ	19
միջին բուժանձնակազմ	50
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	358	247	111
Մոցիսական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ,	1920
տարեվերջի դրությամբ, մարդ	506	X	X
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ			
Հաճախումների քանակը տարվա ընթացքում	27093
գրադարան	-	-	-
թատրոն	-	-	-
համերգ	369
թանգարան			
Իրավական ոլորտ	20	X	X
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	6	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	6	X	X
միջին ծանրության	7	X	X
ծանր	1	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: